ՀԱՅԱՍՏԱՆ

Հոկտեմբերի 10, 2023

Առանցքային տվյալներ.

100,632
փախստական է եկել Հայաստան

98,000
փախստական հաշվառվել է պետական մարմիններում

48,649
փախստականի ժամանակավոր կացարան է տրամադրել ՀՀ կառավարությունը (առ հոկտ. 2)

Ֆինանսավորում.

12.8 միլիոն ԱՄՆ դոլար
է պահանջվում 2023 թվականին, այդ թվում՝ արտակարգ իրավիճակին արձագանքելու համար

Ֆինանսավորված՝ 29%

Պակասող ֆինանսավորում՝ 71%

3.7 միլիոն ԱՄՆ դոլար
է ստացվել առ 2023 թ. հոկտեմբեր 4-ը

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

Իրավիճակի վերաբերյալ թարմացված տվյալներ.

Ընդամենը մեկ շաբաթվա ընթացքում ավելի քան 100,000 փախստական է եկել Հայաստան: Սա երկրի ընդհանուր բնակչության մոտ 3 տոկոսն է կազմում, որը համալրում է ՀՀ-ում բնակություն հաստատած շուրջ 35,000 փախստականների, ապաստան հայցողների ու քաղաքացիություն չունեցողների շարքերը: Փախստականներից շատերն **անհետաձգելի օգնության**, այդ թվում կացարանի, առաջին անհրաժեշտության պարագաների, ինչպես նաեւ բժշկական եւ հոգեբանասոցիալական աջակցության կարիք ունեն: Պետական մարմինները երկրի տարբեր տարածքներում հաշվառում են նոր ժամանող փախստականներին, իսկ Հայաստանում որեւէ հարազատ չունեցողներին տրամադրում ժամանակավոր կացարաններ: Առանձնապես մեծ է անհապաղ եւ երկարաժամկետ օթեւանների անհրաժեշտությունը: Կառավարությունը միջազգային եւ տեղական համայնքների հետ միասնաբար **աշխատում է առավել հրատապ կարիքների բավարարման ուղղությամբ՝ միաժամանակ փորձելով երկարաժամկետ լուծումներ գտնել,** այն է՝ ապահովել բնակարանով, կենսապայմաններով եւ կրթությամբ:

Արձագանքում արտակարգ իրավիճակին

Պաշտպանություն.

- Արտակարգ իրավիճակի ծագման պահից ի վեր ՄԱԿ ՓԳՀ թիմերն այցելել են Կառավարության կողմից յոթ մարզերում ստեղծված մարդասիրական օգնության համակարգման 30 կենտրոններ, որտեղ փախստականներն են գտնվում: ՄԱԿ ՓԳՀ-ն աջակցում է Կառավարությանը՝ փախստականների հատուկ կարիքների համապարփակ հասցեագրումն ապահովելու համար:
- ՄԱԿ ՓԳՀ-ն տրամադրել է նաեւ տեխնիկական սարքավորումներ, այդ թվում դյուրակիր համակարգիչներ եւ պլանշետներ՝ փորձելով նպաստել պետական հաշվառման ու կարիքների գնահատման գործընթացին:

ՄԱԿ ՓԳՀ աշխատակիցն օգնում է 43-ամյա Սյուզաննային եւ նրա չորս զավակներին, որոնք մի քանի օրվա ընթացքում Գորիս համայնքում ապաստան գտած հարյուր հազար փախստականներից են: ©UNHCR/Karen Minasyan

Կացարան եւ առաջին անհրաժեշտության պարագաներ (ԱԱՊ)

- Հոկտեմբերի 7-ին Հայաստան հասավ նախատեսված 30 բեռնատարներից չորրորդը՝ 17,000 փախստականների համար որպես օգնություն բերելով ծածկոցներ, մահճակալներ եւ խոհանոցային հավաքածուներ: ՄԱԿ ՓԳՀ-ն այս պարագաները բաշխում է սահմանամերձ բնակավայրերում փախստականներին ընդունած համայնքապետարաններին, ինչպես նաեւ Երեւանում եւ մայրաքաղաքամերձ այլ բնակավայրերում:

Համակարգում

Հոկտեմբերի 7-ին թողարկվեց **Փախստականների կարիքներին արձագանքման ծրագիրը (ՓԿԱԾ)**, որտեղ ի մի են բերված 60 գործընկերների (այդ թվում 43 ազգային ՀԿ-ներ) կողմից 2023 թ. հոկտեմբերից մինչեւ 2024 թ. մարտ ամիսն օգնության տրամադրման միասնական ջանքերը: ՄԱԿ-ը եւ գործընկերները փորձում են 97 միլիոն ԱՄՆ դոլար հավաքագրել՝ արձագանքելու շուրջ 196,000-ի հրատապ կարիքներին, որից մոտավորապես 101,000-ը փախստականներն են: ՄԱԿ ՓԳՀ-ի ֆինանսական պահանջները 14.6 միլիոն ԱՄՆ դոլար է, որի միջոցով կաջակցի փախստականների եւ ընդունող համայնքների անդամների առաջնային կարիքների բավարարմանը: Ի հավելումն, հոկտեմբերի 8-ին մեկնարկեց **կարիքների արագ գնահատման համատեղ գործընթացը**, որը ձեռնարկել էր ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը, ՄԱԿ-ը եւ այլ մարդասիրական կազմակերպություններ:

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է դոնոր կառույցներին աջակցության համար. Բելգիա | Կանադա | Դանիա | Գերմանիա | Իռլանդիա | Նիդեռլանդներ | Նորվեգիա | Շվեդիա | Շվեյցարիա| Միացյալ Թագավորություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մանրամասն տեղեկությունների համար կապ հաստատել.
ՄԱԿ ՓԳՀ Հայաստան, armye@unhcr.org